# ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա. Ի.

Սելջուկյան լծից Հայաստանի ազատագրման նպատակով վրաց Բագրատունիների հովանու ներքո Զաքարյան իշխանական տան գլխավորությամբ ծավալված ժողովրդաազատագրական պատերազմի առաջին փուլը (1195/1196-1203) ուղղված էր ինչպես թուլացող Ելտկուզյան աթաբեկության ու նրան ենթակա Անիի Շադադյան ամիրայության, այնպես էլ հզորացող Իկոնիայի սուլթանության դեմ: Դրա հետևանքով հյուսիսարևելյան ու կենտրոնական Հայաստանի մեծ մասն ազատագրվեց, իսկ դեպի հյուսիսարևմտյան Հայաստան և վրացական թագավորության արևմտյան սահմաններ Իկոնիայի սուլթանության առաջխաղացումն առժամանակ կասեցվեց : Դա Զաքարյաններին հնարավորություն տվեց անմիջապես ձեռնամուխ լինելու իրենց ազատամարտերի երկրորդ փուլին (1204-1220), որը միտված էր Հայաստանի հյուսիսարևելյան մնացած գավառների և հարավային շրջանների ազատագրմանը: Ուստի և պայքարն ուղղվեց հայկական այդ տարածքներին տիրող Ելտկուզյան աթաբեկության, Շահ-Արմենների ամիրայության և դրանց ենթակա մահմեդական քաղաքական կազմավորումների դեմ, որոնք սովորաբար ներառում էին որևէ քաղաք՝ իր շրջակայքով: Շահ-Արմենների ամիրայության տարածքն Այուբյաններին անցնելուց հետո պայքար սկսվեց նաև նրանց դեմ:

Նասիր ադ-դին Սուքման II-ի (1127-1185) մահից հետո Շահ-Արմենների դեռևս հզոր ամիրայությունն առժամանակ կարողացավ դիմագրավել Ելտկուզյանների և հատկապես Այուբյանների՝ տարածքային նվաճումների նպատակ հետապնդող ոտնձգություններին: Սակայն նրան փոխարինած Բեկթամուրի (1185-1193) սպանությունից հետո Շահ-Արմենների պետությունը բռնեց սրընթաց անկման ու վերացման ուղին: Դրա պատճառները պետք է փնտրել այդ պետության գահակալների անձնական իշխանության աստիճանական հեղինակազրկման ու թուլացման, զինվորականության անկառավարելիության, Խլաթի բնակչության՝ քաղաքական ենթատեքստ ունեցող սոցիալական շարժման և Այուբյանների գնալով ուժեղացող ճնշման մեջ[1]: Հատկանշական է, որ անժառանգ մահացած Սուքման II-ից հետո, նախքան 1207 թ. Այուբյանների կողմից վերացվելը, այդ պետության գահը սովորաբար զբաղեցնում էին նախկին մամլուքներ, որոնք, իբրև կանոն, կարճ էին

---

* Տե՛ս **Շահնազարյան Ա. Ի.,** Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլը (Հայոց պատմության հարցեր, 6, Ե., 2005):

[1] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, Ե., 1981, էջ 293 (մանրամասն տե՛ս **Մարգարյան Հ. Գ.,** Քաղաքական կացությունը Մերձավոր արևելքում և Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII-XIII դդ.), (Պատմա-բանասիրական հանդես, 1989, N 1, էջ 39-44):

իշխում, քանի որ հաճախ ներքին խմորումների զոհ դառնալով՝ բնական մահով չէին վախճանվում[2]:

Ինչպես նկատել է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, «Ապահովելով Վրաստանի ընդարձակված արևելյան և արևմտյան սահմանները Ելտկուզյան աթաբեկության ու Ռումի (Իկոնիայի - Ա. Շ.) սուլթանության հարձակումներից՝ վրաց արքունիքն ուշադրությունը կենտրոնացրեց Հայաստանի հարավում գտնվող Մանազկերտ-Խլաթի (Շահ-Արմենների - Ա. Շ.) ամիրայության վրա»[3]: Այդ ժամանակ Շահ-Արմենների ամիրայությունում իշխում էր պատանի ու անփորձ Մուհամադ իբն Բաքտամուրը (Մալիք Մանսուր): Նա խաղամոլության ու հարբեցողության, ինչպես նաև իր մեծ հեղինակություն վայելող աթաբեկ Ջուջա ալ-Դին Կուլթուղին սպանելու պատճառով հարուցել էր զինվորականության ու ժողովրդի բուռն դժգոհությունը և դրանով իսկ ոչ միայն սասանել էր սեփական իշխանությունը, այլև երկրում խառնակ վիճակ էր ստեղծել[4]: Հայ-վրացական զորքերը հիջրի 601 թ. (29.VIII. 1204-17.VIII.1205) նախ ներխուժեցին Ելտկուզյան աթաբեկություն և Արևմտյան Ատրպատականը կողոպուտի, գերեվարության ու ավերածության ենթարկելով՝ մտան Շահ-Արմենների ամիրայություն: Նրանք, առանց դիմադրության հանդիպելու, խորացան նրա տարածքում և հասան Մանազկերտ[5]: Իբն ալ-Ասիրի իրապատում վկայությամբ «մահմեդականներից ոչ ոք կռվի դուրս չեկավ նրանց դեմ, և նրանք տարածվեցին երկրում, կողոպտելով, գերեվարելով և ինչքան առաջ էին գնում, մահմեդական զորքերը այնքան նահանջում էին: Ապա նրանք ետ դարձան»[6]: Քանի որ հիջրի 601 թ. և ոչ թե հաջորդ թվականին, ինչպես կարծել է Հ. Մանանդյանը[7], հայ-վրացական զորքերը կրկին ներխուժեցին Շահ-Արմենների ամիրայություն[8], պարզ է, որ առաջին արշավանքը տեղի է ունեցել 1204 թ. վաղ աշնանը, իսկ երկրորդը՝ 1205 թ. գարուն-ամռանը, քանզի ուշ աշնանն ու ձմռանը ռազմական գործողությունների հավանականությունն աննշան էր:

Դեպի Շահ-Արմենների ամիրայություն 1205 թ. գարուն-ամռանը կատարված արշավանքը գլխավորում էր Զաքարե ու Իվանե Զաքարյանների հորեղբորորդի Բլուզ Զաքարե Վահրամյանը: Հայ-վրացական զորքերը, ավեր, կողոպուտ ու գերեվարություն սփռելով, մտան Արճեշ ու շրջակա գավառներ, ապա շարժվելով առաջ՝ հասան Շահ-Արմենների ամիրայության արևմտյան սահմանագլխին՝ Կարինի մերձակայքում ընկած ալ-Տին ամրոցը: Իր պետությունը հետագա արհավիրքներից փրկելու նպատակով Մուհամմադ իբն Բաքտամուրը, զորք

---

[2] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Ե., 1965, էջ 223, 225-228, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 279, 289-290, 292:

[3] **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Ե., 1952, էջ 137:

[4] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 289, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 226:

[5] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 283:

[6] Նույն տեղում:

[7] **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 138:

[8] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 283-284:

հավաքելով, դիմեց Կարինի տիրոջ՝ Տուղրիլ բեկ Կլիջ Արսլան Շահի[9] օգնությանը: Վերջինս, իր հերթին հաշվի առնելով սեփական տիրույթներին սպառնացող անմիջական վտանգը, բանակով օգնության շտապեց Մահմուդ իբն Բաքտամուրին: Նրանց դեմ կայացած ճակատամարտում թիկունքից կտրված հայ-վրացական զորքերն ուժերի անհավասարության պատճառով մեծ կորուստներով պարտվեցին: Մարտում զոհվեց նաև Բլուզ Զաքարեն: Հակառակորդը տիրացավ հայ-վրացական զորքերի ավարին և ունեցվածքին, իսկ շատերին գերեց:

Այս պարտության վրեժն առնելու նպատակով հայ-վրացական ավելի մեծաքանակ զորքերը հիջրի 602 թ. (18. VIII. 1205-17. VIII. 1206) նոր արշավանք ձեռնարկեցին Շահ-Արմենների ամիրայության վրա: Քանի որ այդ ժամանակ դեռ իշխում էր Մուհամմադ իբն Բաքտամուրը, իսկ նրա հաջորդ Իզ ադ-Դին Բալբանը 1206-ին է գահակալել[10], այս արշավանքը տեղի է ունեցել 1205 թ. աշնանը: Հայ-վրացական զոքերը, սկզբում որևէ դիմադրության չհանդիպելով, սփռվեցին երկրով մեկ: Իբն ալ-Ասիրի վկայությամբ «նրանք շարունակեցին կողոպտել, գերեվարել, իսկ երկիրը մնացել էր անտեր, անպաշտպան, քանզի նրա տերը մանուկ էր, իսկ իրական կառավարողը իշխանություն չուներ զորքի վրա: Երբ մարդկանց դժբախտությունը սաստկացավ, ըմբոստացան, սկսեցին իրար դրդել, և այդ նահանգի (Շահ-Արմենների ամիրայություն - Ա. Շ.) զորքերը հավաքվեցին»[11]: Ի վերջո, Շահ-Արմենների բանակը, մի կիրճում հայ-վրացական զորքերին ծուղակի մեջ գցելով, հաղթեց և ստիպեց ծանր կորուստներով նահանջել[12]:

Այսպիսով, չնայած Շահ-Արմենների ամիրայության ճգնաժամային վիճակին, դրա դեմ 1204-1205 թթ. հայ-վրացական զորքերի երեք արշավանքներից երկուսն անհաջող ավարտ ունեցան: Դրանից հետո վրացական թագավորության բոլոր ուժերը կենտրոնացվեցին Շահ-Արմեններին ենթակա Կարսի ամիրայության գրավման վրա: Հայ-վրացական զորքերը Կարսի բերդը «պաշարեցին երկար ժամանակ, նեղեցին բնակիչներին և այդ գավառի մի քանի տարվա հարկը վերցրին, իսկ Խլաթի բնակիչները չէին օգնում նրանց և չէին ձգտում թեթևացնել նրանց վիճակը: Տեղի կառավարիչը սուրհանդակներ էր ուղարկում օգնություն ու պաշտպանություն խնդրելու… սակայն ոչ մի պատասխան չէր ստանում»[13]: Թամար թագուհու (1184-1207) երկրորդ պատմիչն իր հերթին նշում է, որ «բազում ժամանակից ի վեր այդ քաղաքի համար կռվում էին Սարգիս Թմոգվեցին (Զաքարե և Իվանե Զաքարյանների հորեղբորորդին - Ա. Շ.), Շալվա Թորելին, մեսխերը, բայց ուժերը չէին հերիքում այն գրավելու…: Շրջակա բոլոր բերդերն ու գյուղերը գրավել էին, միայն դա էր մնացել հակառակորդի ձեռքում»[14]: Կարսի բերդի գրավման

---

[9] Նույն տեղում, էջ 283: Իբն ալ-Ասիրը Տուղրիլ բեկին համարում է Կարինի տիրոջ որդի, բայց իրապատում է Աբու ալ-Ֆեդան, ըստ որի՝ նա այդ ժամանակ արդեն Կարինի տերն էր (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 226):

[10] **Մարգարյան Հ. Գ.,** նշվ. աշխ., էջ 38, ծան. 23:

[11] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 286:

[12] Նույն տեղում, էջ 287:

[13] Նույն տեղում, էջ 291:

[14] *Памятники эпохи Руставели, Л., 1938, с. 70.*

համար մղված պայքարի երկարատևությունը փաստում է նաև XIII դ. սկզբի պարսկալեզու Անանուն հեղինակը: Նա գրում է, որ «անհավատները մի քանի տարի պաշարել էին այդ տեղը և գրավեցին մեծ դժվարությամբ»[15]: Կարսի բերդի գրավման ձգձգումը Թամար թագուհուն ստիպեց լրացուցիչ ուժեր ուղարկել՝ ի դեմս իր ամուսին Դավիթ Սոսլանի գլխավորած Վերին Քարթլիի բանակի և Զաքարյանների անմիջական ենթակայության տակ գտնվող հայկական զորքերի[16]: Հայկական բոլոր սկզբնաղբյուրների և Գեորգի Լաշայի (1207-1222) ժամանակակից վրաց Անանուն պատմիչի կողմից Կարսի բերդի գրավումը Զաքարյան եղբայրներին վերագրելը[17] խոսում է այդ դժվարամատույց ամրությանը տիրելու գործում նրանց վճռորոշ, իսկ Դավիթ Սոսլանի՝ անվանական դերի մասին: Կարսի բերդը գրավվեց այն խմելու ջրով ապահովող ջրամբարը քանդելուց և հակառակորդին ջրի բացակայության պատճառով մեծ կորուստներ պատճառելուց հետո միայն[18]:

Իբն ալ-Ասիրն այս իրադարձությունը թվագրում է հիջրի 603-ով (8.VIII.1206 - 27.VII.1207)՝ հավելելով, որ այդ տարի վրացիների թագուհին, այսինքն՝ Թամարը, մահացավ, «որից հետո նրանց միջև տարակարծություններ սկսվեցին, և այդպիսով ալլահը վերջ տվեց նրանց չարագործություններին մինչև տարվա վերջ»[19]: Վարդան վարդապետն ու Ստեփաննոս եպիսկոպոսը Կարսի բերդի գրավումը դնում են հայոց 655 (29.I.1206 – 22.I.1207) թվականի տակ[20]: Թամար թագուհու երկրորդ պատմիչը գրում է, որ դա կատարվել է Թամարի գահակալության 23-րդ կամ 24-րդ տարում, այսինքն՝ 1207/1208 թվականին, ընդգծելով, որ ձմռան սառնամանիքի պատճառով պաշարողական գործողությունները դժվարացել էին[21]: Քանի որ Թամարն իշխել է 23 տարի և ստույգ մահացել քրոնիկոնի 427 թ.[22] (IX.1206 – VIII.1207), 1208-ը պետք է բացառել: Հետևաբար, հիմք ընդունելով Կարսի բերդի գրավումը ձմռանը կատարվելը և նույն տարում Թամարի մահանալը՝ հայ-վրացական զորքերի կողմից դրա նվաճումը պետք է թվագրել 1206/1207-ի ձմեռով,

---

[15] **Миклухо-Маклай Н. Д.,** *Географическое сочинение XIII в. на персидском языке (Ученые записки Института востоковедения, т. IX, М., 1954, с. 208).*

[16] *Памятники эпохи Руставели, с. 71.*

[17] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Ե., 1961, էջ 162, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 138, Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, Ե., 1951, էջ 37, հ. II, Ե., 1956, էջ 136, Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 391, Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Ե., 1936, էջ 43, 44:

[18] *Памятники эпохи Руставели, с. 71;* **Кекелидзе К. С.**, *Этюды по истории древнегрузинской литературы, т. XII, Тбилиси, 1973, с. 222.*

[19] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 291: Կարսի գրավումը հիջրի 603-ով են թվագրում նաև Համադոլլահ Ղազվինին և Յակուտ ալ-Խամավին *(Ученые записки Института востоковедения, т. IX, с. 208, прим. 2):*

[20] **Վարդան վարդապետ**, էջ 138, Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 37:

[21] *Памятники эпохи Руставели, с. 70-71.*

[22] **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 43-44:

քանի որ Հայոց 1206 թվականն ընդգրկում է 1206 թ. հունվարի 29-ից 1207 թ. հունվարի 29-ը ընկած ժամանակահատվածը[23]:

Ի տարբերություն Զաքարյանների ազատագրած մյուս հայկական շրջանների՝ Կարսը՝ Վանանդ գավառով, Զաքարյաններին չտրվեց: Թամար թագուհու երկրորդ պատմիչը դա բացատրում է կարսեցիների ցանկությամբ: Ըստ վրաց հեղինակի՝ նրանք պաշտպանվելիս պաշարողներին անարգելու համար, հատուցումից վախենալով, հանձնվելիս Թամարից «խնդրեցին խաղաղություն ու երդում, որ ուրիշի չի տա Կարսը, ինչպես Անին ու Դվինը, այլ կպահի իր թագավորության սահմաններում: Դրա համար նա հաստատ խոսք տվեց և իր որդի Գեորգիին հրամայեց, որ մտնի և ստանա քաղաքն ու բերդը: Եվ դա այդպես էլ արվեց»[24]: Այսպիսով, Կարսը Վանանդով տրվեց թագաժառանգ Գեորգի Լաշային և մտցվեց արքունապատկան տիրույթների մեջ: Այնտեղ սահմանակալ կառավարիչ նշանակվեց Իվանե Ախալցիխեցին, որը շարունակեց Կարսից հարավ և արևմուտք ընկած տարածքների գրավումը[25]: Նվաճված բնակավայրերն ու տարածքները դրանք գրված զորավարներին հանձնելու իր իսկ որդեգրած քաղաքա-կանությունից[26] Թամար թագուհու այս շեղման հիմքում ընկած էր ոչ թե հատուցումից կարսեցիներին զերծ պահելու ցանկությունը, այլ Կարս-Վանանդի բացառիկ ռազմավարական դիրքը: Բուն Վրաստանի հարավային սահմանների պաշտպանության առումով, պատմական Հայաստանի այդ գավառի կարևո-րությունը քաջ գիտակցելով, վրաց Բագրատունիները ցանկանում էին այն ունենալ իրենց անմիջական ենթակայության ու հսկողության տակ: Որ ի սկզբանե դա այդպես էր լինելու, հստակ երևում է Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչի վկայությունից, որ վրաց արքունիքը Կարսի գրավմանը ձեռնամուխ էր եղել թագաժառանգի «ծննդյան առթիվ… նրա բախտից»[27]: Ինչ վերաբերում է կարսեցիներին, ապա արքունի տիրույթի բնակիչներ դառնալու նրանց խնդրանքի հիմքում ընկած էր ոչ այնքան հատուցումից խուսափելու, որքան, արքունապատկան քաղաքի բնակիչների վերածվելով, համապատասխան արտոնություններից օգտվելու ցանկությունը:

Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչը գրում է, որ դրանից հետո Զաքարյանները «գրավեցին Կարնիփորի ու Վանանդի բերդերը և Ռախսի (Արաքսի - Ա. Շ.) ափի բերդերը: Եվ սրանից առաջ Խախուլը, Օշկը և Բանան գրավեցին»[28]: Նկատենք, որ Զաքարյաններն այդ ժամանակ գրավել էին Արաքսի միայն ձախափնյակում ընկած բերդերն իրենց շրջակայքով, իսկ աջափնյակ մտան հետագայում:

---

[23] **Թումանյան Բ. Ե.**, Տոմարի պատմություն, Ե., 1972, էջ 80:

[24] *Памятники эпохи Руставели, с. 71.*

[25] **Кекелидзе К. С.,** *Этюды по истории древнегрузинской литературы, т. XII, с. 222.*

[26] *Памятники эпохи Руставели, с. 58-59.*

[27] Քարթլիս ցխովրեբա, հ. I, Թբիլիսի, 1955, էջ 368 (վրացերեն):

[28] Նույն տեղում, էջ 370: Հ. Մանանդյանը (նշվ. աշխ., հ. Գ, էջ 139, ծան. 1) Կարնիփորի փոխարեն առաջարկել է Կարմիր փորակ ընթերցումը:

Թամար թագուհու առաջին պատմիչի համաձայն՝ Դավիթ Սոսլանի մահից հետո՝ Սուրբ պասի ժամանակ, օգտվելով Զաքարե ու Իվանե Զաքարյանների՝ Գեղութում գտնվելուց, Արդաբիլի սուլթանը զորքով Արաքսի ափով գաղտագողի Ավագ շաբաթվա երեկոյան հասնում է Անի: Հաջորդ առավոտ նա անսպասելի մտնում է քաղաք և այն անխնա կոտորածի ու կողոպուտի ենթարկելով՝ մեծաքանակ ավարով և գերիներով անպատիժ հեռանում: Միայն Անիի եկեղեցիներում 12 հազար մարդ էր սպանվել[29]: Անավարտ մեզ հասած կարճառոտ շարադրանքով նույնն է հաղորդում նաև Թամար թագուհու երկրորդ պատմիչը[30]: Ինչ վերաբերում է հայկական և մեզ հայտնի արևելյան սկզբնաղբյուրներին, ապա նրանք այս իրադարձությունը շրջանցում են: Ենթադրելի է, որ հայկական սկզբնաղբյուրների լռությունը բացատրվում է Զաքարյանների համար անպատվաբեր այս իրողությունը շրջանցելու միտումով, իսկ արևելյաններինը՝ դրան կարևորություն չտալով:

Աղետի մասին լուրը Զաքարյան եղբայրներին է հասնում մեկ շաբաթ անց՝ Նոր կիրակիի օրը, և գնալով Անի՝ նրանք նախապատրաստվում են Արդաբիլի դեմ պատասխան արշավանքին: Հատուցման օր է ընտրվում մահմեդականների զատիկը: Հայ-վրացական՝ թշնամուն հանկարծակիի բերելու համար փոքրաքանակ զորաբանակը, Անիից դուրս գալով, Գեղարքունիքի ու Սիսիանի վրայով հասնում է Արաքս և Խուդափիրինի կամրջով անցնելով՝ նախատեսված օրը՝ վաղ առավոտյան, ներխուժում Արդաբիլ: Այդ հարուստ քաղաքն ավերվում է՝ ենթարկվելով կողոպուտի, կոտորածի ու գերեվարության: Միայն մզկիթներում կոտորվում է 12 հազար մարդ: Արդաբիլի սուլթանը սպանվում է, իսկ նրա կանայք ու երեխաները գերվում են: Հայ-վրացական զորաբանակը հսկայական ավարով ու բազմաթիվ գերիներով նույն ճանապարհով վերադառնում է Անի[31]: Ինչպես ստորև կտեսնենք, հայկական աղբյուրներն անդրադառնում են Արդաբիլի գրավմանը՝ այն միահյուսելով դեպի Ատրպատական ու Խորասան հայ-վրացական բանակի հետագայում կատարած արշավանքի հետ: Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչը ևս հիշատակում է Զաքարիա Զաքարյանի գլխավորությամբ դեպի Արդաբիլ կատարված արշավանքը[32]:

Այս իրադարձությունները պատմագիտության մեջ թվագրվում են 1207/1208-1210/1211-ով[33]: Սակայն, քանի որ Անիի աղետը տեղի է ունեցել 1206-1207 թթ. ձմռանը՝ Կարսը գրավելուն հետևած Ավագ շաբաթվա հաջորդ օրը, ապա այն

---

29 **Кекелидзе К. С.,** *Этюды по истории древнегрузинской литературы, т. XII, с. 225-226.*

30 *Памятники эпохи Руставели, с. 72.*

31 **Кекелидзе К. С.,** *Этюды по истории древнегрузинской литературы, т.* XII, *с. 226-227.* Արդաբիլը հիջրի 613 թ. (1216/1217) ամրացվեց նոր, բարձր պարսպով (*Ученые записки Института востоковедения, т. IX, с. 196).*

32 **Մելիքսեթ-Բեկ Լ.,** էջ 44:

33 **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 139, 142, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Ե., 1971, էջ 537, Brosset M., Histoire de la Georgie, Spb, 1849, p. 468-470, **Буниятов З. М.,** *Государство атабеков Азербайджана (1136-1225 годы), Баку, 1978, с. 105-106;* **Джавахишвили И. А.,** *История грузинского народа, перевод М. Хубуа (на правах рукописи), т. II, с. 419-420,* ***Հակոբյան Թ. Խ.,*** *Անիի պատմություն, գ. II, Ե., 1982, էջ 130:*

թվագրվում է 1207 թ. մարտի երկրորդ կեսով, քանզի Հայոց զատիկը նշվում է գարնանային գիշերահավասարից՝ մարտի 21-ից հետո եկող առաջին կիրակի օրը, որին նախորդում է Ավագ շաբաթը: Ինչ վերաբերում է Արդաբիլին, ապա դրա ավերումը գրեթե անմիջապես է հետևել Անիի աղետին: Բանն այն է, որ 1206-1207 թթ. ձմեռը ներառող հիջիրի 603(8.VIII.1206 – 28.VII.1207) թվականին մահմեդական զատիկը տոնվել է ապրիլի վերջին, քանի որ պասի ռամադան՝ ամսի 1-ը, այդ տարի համընկել է մարտի 31-ին:

Անիի աղետը վկայեց անգամ փոքրաքանակ, բայց արագաշարժ հակառակորդի դեմ վրացական թագավորության պաշտպանական համակարգի անզորությունը, ինչից անհրաժեշտ հետևություններ չարվեցին:

1207 թ. Սալահ ադ-Դինի եղբորորդի ալ-Մալիք ալ-Ահուադը գրավեց Շահ-Արմենների ամիրայության կենտրոն Խլաթ քաղաքը[34]: Դրանով երբեմնի ուժեղ այդ պետությունն անցավ զորեղ Այուբյաններին, որոնք դարձան վրացական թագավորության վտանգավոր հարևանը: «Դրացի թագավորները,- նկատում է Իբն ալ-Ասիրը,- չէին ուզում նրա իշխանության հզորացումը, քանզի վախենում էին նրա հորից (Մելիք Ադիլից - Ա. Շ.): Նրանից վախենում էին նաև վրացիք (քուրջ) և ատում նրան: Նրանք անընդհատ հարձակումներ էին գործում Խլաթի գավառների ու նրա երկրի վրա»[35]: Սակայն, քանի որ ալ-Մալիք ալ-Ահուադը Խլաթին տիրացել էր նրա բնակիչների մի մասի համաձայնությամբ միայն, և Այուբյանները Շահ-Արմենների նախկին տիրույթներում, հատկապես Խլաթում, ապստամբության իրական սպառնալիքի տակ իրենց ամուր չէին զգում, հայ-վրացական զորքերը շարունակում էին այդ տարածքների վրա հարձակումները[36]: Նրանք հիջրի 605 թ. (16.VII.1208 – 5.VII.1209) պաշարեցին ու գրավեցին Արճեշը: Քաղաքը կողոպտվեց, ապա հրկիզվեց, իսկ բնակչության մեծ մասը կոտորվեց կամ գերեվարվեց: Ալ-Մալիք ալ-Ահուադը, այդ ընթացքում մեծ բանակով Խլաթում գտնվելով հանդերձ, արճեշցիներին օգնության չշտապեց: Իբն ալ-Ասիրն այս հանգամանքը բացատրում է հայ-վրացական զորքերի մեծաքանակությամբ և նրանով, որ Խլաթի նոր տիրակալը, նրա բնակիչներին բազմաթիվ չարիքներ պատճառած լինելով, հիմնավոր երկյուղում էր, որ քաղաքից դուրս գալու պարագայում այլևս չի կարողանա վերադառնալ: Այդ իսկ պատճառով հայ-վրացական զորքերն ապահով ու անվնաս հետ դարձան[37]: Հայկական սկզբնաղբյուրներից դեպի Արճեշ հայ-վրացական զորքերի արշավանքին անդրադարձել է Մխիթար Այրիվանեցին: Նա, այն թվագրելով 1201-1210 թթ. միջակայքով, գրել է. «Մեռաւ Թամարն և թագաւորեաց որդի նորա Լաշայն, և ասպատակեայ յԱրճեշ և ի Վարագ»[38]: Սրանից հետևում է, որ հայ-վրացական զորքերն ասպատակել էին նաև Վանա լճից արևելք ընկած շրջանները: Լ. Բաբայանը, վկայակոչելով Իբն ալ-Ասիրի աշխատության ռուսերեն հրատարակության 134-րդ էջը, պնդում է, որ «1208-1209 թթ. հայ-

---

[34] **Մարգարյան Հ. Գ.,** նշվ. աշխ., էջ 38, ծան. 23:

[35] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 292:

[36] Նույն տեղում:

[37] Նույն տեղում, էջ 292-293:

[38] **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 65:

վրացական զորքերն ազատագրեցին Բագրևանդի շրջանը, Տուրուբերան նահանգի հյուսիսային գավառները, Մանազկերտ և Արճեշ քաղաքները և պաշարեցին Խլաթը, սակայն հաջողություն չունենալով՝ ետ դարձան»[39]: Իրականում պատմիչն իր երկասիրության այդ էջում անդրադառնում է միայն Արճեշի գրավման հետ կապված դեպքերին[40]: Ավելին, նա իր պատմության մեջ ընդհանրապես որևէ խոսք չի ասում ո՛չ Լ. Բաբայանի մատնանշած տարածքների ու Մանազկերտի ազատագրման և ո՛չ էլ Խլաթի անհաջող պաշարման մասին: Արդեն վերը տեսանք, որ նա միայն գրում է հիջրի 601 թ. (29.VIII.1204 – 17.VIII.1205) հայ-վրացական զորքերի՝ Մանազկերտ հասնելու ու նրա շրջակայքն ասպատակելու և ոչ թե այդ քաղաքն ազատագրելու մասին:

Շահ-Արմենների նախկին տիրույթներում Այուբյանների անկայուն դրությունը հավանաբար պահպանվեց մինչև Զաքարյանների հերթական հարձակման և Իվանե Զաքարյանի գերվելու հետ կապված իրադարձությունները[41]: Օգտվելով դրանից՝ վրաց Բագրատունիներն ու Զաքարյանները նպատակադրվել էին խլել Շահ-Արմենների՝ Այուբյաններին անցած նախկին տիրույթները և դրանով իսկ ազատագրել Հայաստանի հարավային գավառները: Գուցե և այդ իրողության գիտակցմամբ և եղբոր՝ ալ-Մալիք ալ-Ահուադի տիրույթների նկատմամբ վրացական թագավորության հավակնություններին վերջ տալու ձգտմամբ պետք է բացատրել այդ ժամանակ Խառանի ու Զազիրայի տեր[42] ալ-Մալիք ալ-Աշրաֆի դեսպանի՝ հիջրի 606 թ. շաբան ամսին (1210 թ. հունվար-փետրվար) Գեորգիի Լաշայի մոտ ժամանելը[43]: Բոլոր դեպքերում, հայ-վրացական զորքերը Զաքարե ու Իվանե Զաքարյանների գլխավորությամբ արշավեցին դեպի Խլաթ և պաշարեցին այն: Այս արշավանքն Աբու-լ-Ֆիդան թվագրում է հիջրի 607-ով (25.VI.1210 – 14.VI.1211), Մխիթար Այրիվանեցին՝ 1201-1210 միջակայքով, իսկ Ստեփաննոս եպիսկոպոսն ու Սամվել Անեցու շարունակողներից մեկը՝ 1211-ով[44]: Մնացած հայկական սկզբնաղբյուրները որևէ թվական չեն առաջարկում՝ բավարարվելով այդ արշավանքի հետ կապված իրադարձությունների սեղմ կամ ընդարձակ նկարագրությամբ:

Դեպի Խլաթ արշավանքի թվագրման հարցում իրապատում է Աբու-լ-Ֆիդան, և այդ քաղաքի պաշարումը պետք է կայացած լինի հիջրի 607 թ. առաջին կեսին, այսինքն՝ 1210 թ. երկրորդ կիսամյակին: Դա բացատրվում է նրանով, որ հիջրի 607 թ. երկրորդ կեսին, այն է՝ 1211 թ. առաջին կեսին, Խլաթում արդեն իշխում էր ալ-

---

[39] Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 538:

[40] *Из Тарах ал-Кмиль (Полного свода историй) Ибн ал-Асира, Баку, 1940, с. 134.* Հմմտ օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 292-293:

[41] **Մարգարյան Հ. Գ.,** նշվ. աշխ., էջ 43:

[42] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 290:

[43] *Ученые записки Института востоковедения, т. IX, с. 182-183.*

[44] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 228, **Մխիթար Այրիվանեցի,** էջ 65, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 38, Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 47 (տողատակ):

Մալիք ալ-Ահուադի եղբայր ալ-Մալիք ալ-Աշրաֆը[45], մինչդեռ այն պաշարվել է ալ-Մալիք ալ-Ահուադի օրոք: Զաքարյանները մոտ էին Խլաթի գրավմանը[46], սակայն նրանց հաջողությանը խանգարեց պատահականությունը: Բանն այն է, որ քաղաքի պարիսպների մոտ Իվանե Զաքարյանը 20 հեծյալներով, հավանաբար թիկնապահներով, անսպասելիորեն գերվեց և տարվեց Խլաթ: Իվանե Զաքարյանի գերվելն Աբու-լ-Ֆիդան բացատրում է նրա անսթափությամբ, իսկ Կիրակոս Գանձակեցին՝ Խլաթի պարիսպները զննելիս դրսևորած անզգուշությամբ[47]: Հայ առաքելական եկեղեցու դավանության մոլի պաշտպան Վարդան վարդապետն Իվանե Զաքարյանի գերվելը պատճառաբանում է նրա՝ քաղկեդոնականությանը հարելով. «տկարացաւ ի հաւատոյն և անյաջողեալ նմա ըմբռնեցաւ գերի ի Խլաթ»[48]: Վարդան վարդապետին կրկնորդել է Անանուն Սեբաստացին[49]:

Եղբոր կյանքը փրկելու և գերությունից ազատելու նպատակով Զաքարե Զաքարյանը, հակառակորդին սպառնալիքներ հասցեագրելուց զատ, ստիպված դիմեց բանակցությունների: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ալ-Մալիք ալ-Ահուադին հանձնվեցին մի քանի բերդեր, արձակվեցին հինգ հազար մահմեդական գերիներ, և վճարվեց հարյուր հազար դինար ռազմատուգանք: Կողմերի միջև 30 տարով կնքվեց զինադադար, որն ալ-Մալիք ալ-Ահուադի պահանջով ամրապնդվեց Իվանե Զաքարյանի դուստր Թամթայի հետ նրա ամուսնությամբ[50]: Եթե Կիրակոս Գանձակեցին ու Վարդան վարդապետը բավարարվել են միայն Թամթային Խլաթի տիրոջը (ըստ առաջինի՝ Կուզին, որն ալ-Մալիք ալ-Ահուադի մականունն է, իսկ համաձայն երկրորդի՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆին) կնության տալն արձանագրելով[51], ապա Ստեփաննոս եպիսկոպոսը հավելել է, որ Իվանե Զաքարյանը, բացի այդ, «յոլով գանձիւք ետ ի գինս իւր յամիրայն և ազատեցաւ»[52]: Ինչ վերաբերում է վրացական սկզբնաղբյուրներին, ապա Խլաթի հետ կապված իրադարձություններին անդրադարձել է միայն Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչը, այն էլ իրականությունը գլխիվայր

---

[45] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 228, **Մխիթար Այրիվանեցի,** էջ 65:

[46] ***Կիրակոս Գանձակեցի**, էջ 164:*

[47] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 228, **Կիրակոս Գանձակեցի,** էջ 165:

[48] **Վարդան վարդապետ,** էջ 138:

[49] Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. II, էջ 136:

[50] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 228, **Կիրակոս Գանձակեցի,** էջ 165:

[51] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 165, **Վարդան վարդապետ,** էջ 138: Ինչպես արդեն նկատվել է (Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 5, ծան. 1, **Մանանդյան Հ.,** նշվ, աշխ., հ. Գ, էջ 141, **Մարգարյան Հ. Գ.,** նշվ. աշխ., էջ 44, ծան. 53) իրապատում է Կիրակոս Գանձակեցին, պնդելով, որ Թամթան նախ «եղեւ կին Կզոյ (ալ-Մալիք ալ-Ահուադի - Ա. Շ.) և յետ նորայ Աշրափին» (Կիրակոս Գանձակեցի, էջ 165):

[52] Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 38:

շրջած: Նա պնդում է, թե իբր Խլաթի երկիրն ավերելուց հետո Զաքարե Զաքարյանը նրա տիրոջը ստիպեց հնազանդվել և ընդունել հաշտության պայմանները[53]:

Ի վերջո «եղև սէր և միաբանութիւն ընդ թագաւորութիւնն վրաց և ընդ իշխանութիւնն սուլտանաց (Այուբյանների - Ա. Շ.)»[54]: Ինչպես այս խոսքերի հեղինակ Կիրակոս Գանձակեցին, այնպես էլ հայ-վրացական այլ սկզբնաղբյուրներ Խլաթի հետ կապված իրադարձություններին անդրադառնալիս Գեորգի Լաշայի և, ընդհանրապես, Վրաց արքունիքի խաղացած դերի մասին լռում են: Եվ դա այն դեպքում, երբ, ինչպես տեսանք, Կիրակոս Գանձակեցին շեշտում է, որ Խլաթի զինադադարով խաղաղություն հաստատվեց ոչ թե Զաքարյանների ու Այուբյանների միջև, այլ վերջիններիս ու վրացական թագավորության: Աբու-լ-Ֆիդան իր հերթին Իվանե Զաքարյանին գիտի իբրև վրաց թագավորի[55]: Ասվածը վկայում է, որ այդ ժամանակ իր հզորության գագաթնակետին գտնվող Զաքարյան ավատական տունն առավել քան երբևէ վճռորոշ դեր էր կատարում վրացական թագավորության ռազմաքաղաքական կյանքում:

Այսպիսով, հարավային Հայաստանի ազատագրման համար նախ Շահ-Արմենների պետության, ապա դրան տիրացած Այուբյանների դեմ XIII դ. առաջին տասնամյակի երկրորդ կեսին վրաց Բագրատունիների հովանավորությամբ Զաքարյանների գործադրած համառ ջանքերն ապարդյուն անցան: Հայկական այդ տարածքները չազատագրվեցին և Զաքարյան Հայաստանի մաս չկազմեցին: Դա բացատրվում է XII դ. վերջին – XIII դ. սկզբին Մերձավոր արևելքում կատարված ռազմաքաղաքական տեղաշարժերի հետևանքով Այուբյանների հզոր պետության առաջացմամբ: Հետևաբար, Խլաթի պաշարման ժամանակ հայ-վրացական զորքերի անհաջողությունը ոչ թե պատահականության, այլ Այուբյանների պետության և վրացական թագավորության ուժերի անհավասարության հետևանք էր: Այդ իրողության արդյունք էր Խլաթի 30-ամյա զինադադարը, որը, չնայած դեպի հարավ Զաքարյանների առաջխաղացումը կասեցնելուն, նրանց թույլ տվեց, այդ ուղղությամբ ապահով թիկունք ունենալով, ուշադրությունը բևեռել դեպի արևելք և վերսկսել Ելտկուզյան աթաբեկությանը պատկանող հայկական հողերի ազատագրման համար դեռևս 1190-ական թվականների կեսերին սկսած պայքարը:

Ելտկուզյան աթաբեկ Նուսրաթ ադ-Դին Աբու-Բաքրը (1191-1210), որին սկզբնաղբյուրներն աննշան բացառությամբ բնութագրում են իբրև անուղղելի հարբեցողի ու ապիկար տիրակալի, հաշվի առնելով իր երկրի ներքին անկայունությունը և արևելքից խորեզմշահերի պետության, իսկ արևմուտքից վրացական թագավորության վտանգը, դիմել էր Իբն ալ-Ասիրի սարկազմին արժանացած քայլի: Հիջրի 602 թ. (18.VIII.1205 – 7.VIII.1206) նա ամուսնացել էր վրաց արքայադուստր Ռուսուդանի՝ Թամարի խորթ (հարճից ծնված) քրոջ հետ: Դրանից հետո Ելտկուզյան աթաբեկության նկատմամբ վրացական թագա-

[53] **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 44:
[54] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 166:
[55] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 228:

վորության ճնշումն առժամանակ դադարեց[56]: Աբու-լ-Ֆիդայի համաձայն՝ վրաց արքունիքն այս ամուսնությանը համաձայնել էր որոշակի պայմաններով[57]: Ենթադրելի է, որ դրանցից էր նաև հարկատվությունը, քանի որ վրացական սկզբնաղբյուրներում հիշատակվում է Ելտկուզյանների կողմից վրաց արքունիքին հարկ տալը[58]: Ելտկուզյանների հետ վրաց Բագրատունիների հետ խնամիանալու գործում ոչ պակաս էական հանգամանք կարող էր լինել նաև այդ ժամանակ դեպի հարավ ռազմական ձեռնարկումների ընթացքում արևելքում ապահով թիկունք ունենալու նրանց ձգտումը: Սակայն դա ժամանակավոր հաշտություն, ավելի ճիշտ դադար էր. հայ նոր բարձրացող կամ հին ավատական-զինվորական վերնախավը, ի դեմս Ելտկուզյաններին պատկանող հայկական գավառների, կարոտ էր տիրույթների, իսկ վրաց Բագրատունիները հետամուտ էին իրենց թագավորության ընդարձակմամբ բուն Վրաստանի սահմանների ամրապընդմանը: Ուստի, երբ Նուսրաթ ադ-Դին Աբու-Բաքրը «շեղվեց դաշինքի պայմաններից, դրա համար վրացիները լքեցին նրան»[59]: Դա նշանակում էր Ելտկուզյանների դեմ ռազմական գործողությունների վերսկսում, առավել ևս, որ Խլաթի զինադադարից հետո Այուբյանների կողմից վրացական թագավորությանը վտանգ չէր սպառնում: Զաքարյանները նախ վերսկսեցին Սյունիքի ազատագրումը, ինչին ստորև կանդրադառնանք, ապա հընթացս նախադեպը չունեցող խոշոր արշավանք կատարեցին դեպի Ատրպատական ու Խորասան: Այն պատմագիտության մեջ սկզբնաղբյուրների առաջարկած թվականների անհամապատասխանության պատճառով թվագրվում է մոտավոր ճշտությամբ՝ 1209-1211-ով[60]: Վարդան վարդապետի համաձայն՝ հայոց 659 (1210) թ. «մորեխն աւերեաց զբազում գաւառս, յորում ժամանակի մեծն Զաքարէ աւերէր զտունն Պարսից»[61]: Ապա նա հավելում է, որ Զաքարե Զաքարյանը «դարձեալ յայնր կոտորուածէ՝ կատարի ի տէր… ի վեցհարիւր վաթսուն և մի (1212 - Ա. Շ.) թուին»[62]: Ստեփաննոս եպիսկոպոսը, Խլաթում ալ-Մալիք ալ-Ահուադի և ալ-Մալիք ալ-Աշրաֆի գահակալման հաջորդականությունը շրջելով, նշում է. «Ի ՈԿԱ (1212 - Ա. Շ.) թվին Մելիք Աշրափն մեռաւ և Մէլիք Ավհադինն նստաւ»[63]: Ապա նա անդրադառնում է նույն տարում Զաքարյան եղբայրների՝ «ի Գետակն» հրավիրած եկեղեցական ժողովին ու

---

[56] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, էջ 297, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 227:

[57] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 227:

[58] **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 35, Վրաց ժամանակագրություն (1207-1318), Ե., 1971, էջ 45:

[59] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 227:

[60] **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., հ. Գ, էջ 142, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 538, Վրաստանի պատմության ակնարկներ, հ. III, Թբիլիսի, 1979, էջ 337-338 (վրացերեն), **Նատրոշվիլի Թ., Զափարիձե Գ.**, Մի տարեթվի որոշման փորձ (Մացնե, լեզվի և գրականության սերիա, 1974, N 1, էջ 158, վրացերեն), **Джавахишвили И. А.**, նշվ. աշխ., հ. II, էջ 415-420, **Буниятов З. М.,** նշվ. աշխ., էջ 105:

[61] **Վարդան վարդապետ,** էջ 139:

[62] Նույն տեղում, էջ 140:

[63] Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 38:

հավելում, որ դրանից հետո Զաքարեն «գնաց յԱրտաւէլ և կոտորեաց: Եւ ի գալ ամն մեռաւ ի ճանապարհին»[64]: Կիրակոս Գանձակեցին անթվական շեշտում է այս արշավանքից վերադառնալիս Զաքարե Զաքարյանի՝ խոցախտով հիվանդանալն ու «յետ սակաւ աւուրց վախճանվելը»[65]: Թամար թագուհու առաջին պատմիչը ևս, թվական չնշելով, հայտնում է, որ հայ-վրացական զորքերն արշավանքից առաջ աշնանը Տփխիսում զորատեսի են հավաքվել[66]: Արշավանքը մանրամասն նկարագրելուց հետո նա հաղորդում է Զաքարեի մահվան մասին[67]: Ալ-Հուսայնին այս արշավանքը դնում է Դվինի գրավումից հետո[68], իսկ Իբն Խալիկանն այն թվագրում է հիջրի 606-ով (6.VII.1209 – 24.VI.1210)[69]:

Այսպիսով, հայ-վրացական սկզբնաղբյուրների միահամուռ վկայությամբ Զաքարե Զաքարյանը մահացել է այս արշավանքից անմիջապես հետո, որը տեղի էր ունեցել 1212 թ.[70]: Ընդ որում, Վարդան վարդապետի ու Ստեփաննոս եպիսկոպոսի հաղորդումներից հետևում է, որ արշավանքն օրացուցային մեկ տարում չի կատարվել: Ըստ Վարդան վարդապետի՝ այն երեք տարվա (1210-1212) միջակայք է ընդգրկել, իսկ համաձայն Ստեփաննոս եպիսկոպոսի՝ երկու (1212-1213): Այս արշավանքի ժամանակ հայկական սկզբնաղբյուրների կողմից հայ-վրացական զորքերի մինչև Արդաբիլ հասցնելն իսկ վկայում է, որ նրանք աղոտ տեղեկացվածության պատճառով դեպի այդ քաղաք և հետագայում Ատրպատական ու Խորասան կատարված արշավանքները շփոթել ու միահյուսել են[71]: Հետևաբար, Վարդան վարդապետն ու Ստեփաննոս եպիսկոպոսը կարող էին աղավաղել նաև դեպի Ատրպատական ու Խորասան կատարված այս արշավանքի թվականը: Քանի որ Վարդան վարդապետի առաջարկած եռամյա միջակայքը ոչ մի քննության չի դիմանում, պնդելի է, որ նրա տված հայոց 659 (1210) թվականը վերաբերում է միայն մորեխի պատճառած վնասների տարուն, իսկ «յորում ժամանակի» արտահայտությունը՝ հաջորդ: Մեր պնդման հիմքում ընկած է այս արշավանքն աշնանը սկսված լինելու մասին Թամար թագուհու առաջին պատմիչի արժանահավատ վկայությունը, ինչը բացառում է տարվա այդ եղանակին մորեխի ակտիվությունը: Բացի այդ, հսկայական տարածք ընդգրկող, մի շարք քաղաքների պաշարմամբ, ինչպես նաև հսկայական ռազմավարով ու բազմաթիվ հետիոտն գերիներով ուղեկցվող այդ արշավանքն աշնանը սկսված լինելու դեպքում նույն տարում ավարտվել չէր կարող և կշարունակվեր նաև հաջորդ տարում: Իսկ որ դա իրոք այդպես է, արդեն տեսանք Ստեփաննոս եպիսկոպոսի «Եւ ի գալ ամն մեռաւ ի ճանապարհին» վկայությունից: Չպետք է նաև մոռանալ, որ Հայոց 659, 660 և 661

---

[64] Նույն տեղում:

[65] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 185-186:

66 **Кекелидзе К. С.,** *Этюды по истории древнегрузинской литературы, т. XII, с. 227.*

[67] Նույն տեղում, էջ 230:

[68] ***Садр ад-Дин Али ал-Хусаини,*** *Ахбар ад Даулат ас Селджукийа, М., 1980, с. 160.*

[69] **Ibn Khallikans,** Biographical Dictionary, vol. I, Beirut, 1970, p. 490.

[70] **Վարդան վարդապետ**, էջ 140, **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 398, Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. II, էջ 136:

[71] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., հ. Գ, էջ 142:

թվականները համապատասխանաբար ավարտվել են 28.I.1211, 28.I.1212 և 28.I.1213 թվականներին[72], այսինքն՝ ընդգրկել են նաև հաջորդ տարվա առաջին ամիսը: Հետևաբար, արշավանքը երկու տարվա միջակայքում կատարված լինելու հարցում, չնայած այն սխալ թվագրելուն, Ստեփաննոս եպիսկոպոսը ճիշտ է: Ինչ վերաբերում է նրա առաջարկած 1212 թվականին, ապա այն սրբագրվում է ալ-Մալիք ալ-Աշրաֆի՝ 1211 թ. առաջին կեսին եղբորը՝ ալ-Մալիք ալ-Ահուադին, փոխարինած լինելու և այս արշավանքը Խլաթի դեպքերից հետո կատարված լինելու անվիճելի իրողությամբ: Այսպիսով, խնդրո առարկա արշավանքը սկսվել է 1211 թ. աշնանը և ավարտվել հաջորդ՝ 1212 թ. սկզբին:

Հայ-վրացական մեծաքանակ զորքերը, Զաքարե Զաքարյանի գլխավորությամբ Տփխիսից դուրս գալով, հասան Նախճավան ու այն հարկման ենթարկելով[73]՝ դուրս եկան Զուղա և Արաքսն անցնելով՝ Դարդուզի ձորով շարժվեցին դեպի Մարանդ: Վերջինիս բնակիչները դիմադրելու փոխարեն ապաստանեցին շրջակա ժայռերի ճեղքերում ու ծերպերում: Նրանց գտնելու համար Զաքարե Զաքարյանն ուղարկեց 500 հոգանոց ընտիր հեծելաջոկատ՝ իր հորեղբորորդի Սարգիս Թմոգվեցու որդի Թաղիադինի գլխավորությամբ: Զաքարե Զաքարյանը նրան պատվիրել էր մարանդցիներին գտնելու դեպքում, մինչև իրեն հայտնելը և հիմնական ուժերի մոտենալը, մարտի մեջ չմտնել: Սակայն իրադարձություններն այլ կերպ զարգացան, քանի որ մարանդցիները, Թաղիադինի հեծելաջոկատի փոքրաթվությունից ոգևորված, անմիջապես հարձակման անցան: Թաղիադինը ստիպված էր ընդունել մարտը՝ չհասցնելով այդ մասին տեղեկացնել Զաքարե Զաքարյանին: Երբ հայ-վրացական բանակի հիմնական ուժերը հասան մարտադաշտ, մարանդցիները գլխովին ջախջախվել և փախել էին: Չնայած փառավոր հաղթանակին՝ մարտի մասին չտեղեկացնելու համար Թաղիադինն արժանացավ Զաքարե Զաքարյանի խիստ կշտամբանքին: Մարանդից հայ-վրացական զորքերը շարժվեցին դեպի Թավրիզ և Դևսոփն կոչվող լեռն անցնելով՝ հասան այնտեղ: Սարսափած թավրիզցիները բանագնացների միջոցով խնդրեցին քաղաքին ձեռք չտալ՝ խոստանալով հարուստ փրկագին: Այն ստանալուց հետո հայ-վրացական բանակը, առանց Թավրիզն ու իր շրջակայքն ասպատակելու, շարժվեց դեպի Միանե, որի բնակիչները քաղաքի տիրոջ գլխավորությամբ հետևեցին թավրիզցիների օրինակին: Զաքարե Զաքարյանն ինչպես Թավրիզում էր արել, Միանեում ևս պահապաններ նշանակելով և մեծ փրկագին առնելով՝ շարժվեց Զենջան փոքրիկ քաղաքի վրա: Զենջանցիները, ըստ երևույթին, տեղյակ լինելով հայ-վրացական բանակի արշավանքի մասին, նախօրոք ամրացրել էին քաղաքի կավե պարիսպները, որպեսզի հաջողությամբ պաշտպանվեին: Հայ-վրացական զորքերը, հանդիպելով զենջանցիների համառ դիմադրությանը, պարիսպների մեջ ականներ փորելով, ներխուժեցին քաղաք: Զենջանը ենթարկվեց կոտորածի, կողոպուտի ու ավերածության: Որոշ դադարից հետո հայ-վրացական զորքերը շարժվեցին դեպի Խորասան և նույն օրը երեկոյան ավերեցին ճանապարհին ընկած

---

[72] **Թումանյան Բ. Ե.,** նշվ. աշխ., էջ 80:

[73] **ал-Хусайни,** *с. 160.*

մի փոքր գյուղաքաղաք: Այդտեղ հանգստանալուց հետո նրանք, Խորասանում խորանալով, գրավեցին նախ Քազվին, ապա Ահվար քաղաքները: Դրանք թալանվեցին, իսկ բնակիչների մի մասը գերվեց: Հայ-վրացական զորքերն այդտեղից հասան Գուրգանտ (Ջուրջան) քաղաքը, որն իր շրջակայքով արժանացավ նախորդների ճակատագրին: Դրանից հետո հայ-վրացական զորքերը ստիպված էին դադարեցնել արշավանքն ու հետ դառնալ, քանի որ ռազմավարի առատությունն ու գերիների մեծաքանակությունն անհնար էին դարձնում հետագա առաջխաղացումը: Նրանք նույն երթուղով հետ դարձան և հասնելով Միանե՝ տեսան, որ իրենց թողած պահապանները սպանվել են: Նրանց վրեժը լուծելու նպատակով Միանեի մելիքը, որդիներն ու մերձավորները տանջամահ արվեցին, իսկ քաղաքն ավերվեց ու հրկիզվեց՝ նախքան այդ ենթարկվելով թալանի, կոտորածի ու գերեվարության: Հայ-վրացական զորքերը, այդտեղից հեռանալով, հասան նախ Ուժեն, ապա Թավրիզ քաղաքները: Դրանց բնակիչներից բազմաթիվ թանկարժեք ընծաներ ստանալով՝ նրանք կտրեցին Ատրպատականը և Արաքսի վրայով Նախճավան մտնելով՝ այնտեղից գնացին Տփխիս[74]:

Ելտկուզյան աթաբեկությանը ցնցած այս խոշոր արշավանքից հետո Զաքարյանները կարող էին ավելի վստահ շարունակել այդ պետությանը ենթակա հայկական գավառների ազատագրումը, որը 1203 թ. Դվին-Արարատյան դաշտի գրավումից հետո կանգ էր առել: Պատճառն ինչպես ռազմաքաղաքական գործոններով պայմանավորված՝ այլ ուղղություններով ազատամարտերն էին, այնպես էլ Վայոց ձորի ու Սյունիքի գրավմանը խոչընդոտող բնական արգելքները՝ Վարդենիսի ու Գեղամա լեռները և Գնդասարի լեռնազանգվածը: Ոչ պակաս կարևոր դեր էր խաղում նաև Վայոց ձորի մուտքերի՝ բերդերով ամրացվածությունը:

Սկզբնաղբյուրների կցկտուր հաղորդումներից երևում է, որ Զաքարյանները Սյունիքի մաս Վայոց ձորի ազատագրմանը հետամուտ էին եղել նախքան վերոհիշյալ արշավանքը[75]: Ստեփաննոս Օրբելյանի վկայակոչած մի փաստաթղթից պարզվում է, որ 1211 թ. Լիպարիտ Օրբելյանի խընդրանքով Զաքարե Զաքարյանը Նորավանքին է վերադարձրել Ագարակի ձոր գյուղը[76]: Դա փաստում է այդ թվականին Վայոց ձորի ազատագրված լինելը: Անկասկած, այն սկսվել է Վայոց ձորի պաշտպանական համակարգի կարևոր օղակ՝ Նորավանքի մերձակայքում (Վայոց ձորի մարզի Արենի գյուղի մոտ) գտնված Հրասեկա բերդի

---

[74] **Кекелидзе К. С.,** *Этюды по истории древнегрузинской литературы, т. XII, с. 227-230.*

[75] Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղին մերձակա Ցաղաց քար վանքի Ս. Կարապետ եկեղեցու մի կիսաեղծ արձանագրության սկիզբը՝ «…ի թագաւորութ/… մեծ իշխանին Զա/…», Ս. Բարխուդարյանը վերականգնել է հետևյալ կերպ «…ի թագաւորութ[եան Վրաց Թամարին եւ] մեծ իշխանին Զա[քարէի] …»(Դիվան հայ վիմագրության, պրակ III, Ե., 1967, էջ 148): Դա ենթադրում է Վայոց ձորի ազատագրումը նախքան 1207 թ.՝ Թամարի մահը, սկսված լինելը: Ավելի հավանական ենք համարում դա Գեորգի Լաշայի գահակալումից հետո կատարվելը՝ առաջարկելով «…ի թագաւորութ[եան Վրաց Գեորգեա եւ] մեծ իշխանին Զա[քարէի]…» ընթերցումը:

[76] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 358-359: Հետագայում Լիպարիտ Օրբելյանը վերահաստատել է այդ ակտը (նույն տեղում, էջ 360, Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 211):

(Հրաշկաբերդ) նվաճմամբ: Այն հսկում էր Արաքսի հովտից Արփա գյուղ եկող և այնտեղից ճյուղավորվելով՝ դեպի Գեղարքունիք ու Արփա գետի աջ ափով Սյունիքի խորքերը տանող ռազմավարական նշանակությամբ ճանապարհը: Հրաշկաբերդը գրավել էին Զաքարյանների զորավարներ Վասակ Խաղբակյանը և Արփայեցի Մխիթարը՝ «յաւուրս Աթաբեկ Իւանէին… հրամանաւ և ուժով Իւանէի»[77]: Սյունյաց պատմիչի այս խոսքերից հետևում է, որ Վայոց ձորի ազատագրումն ընթացել է Իվանե Զաքարյանի գլխավորությամբ: Սակայն ոչ թե «յաւուրս» Իվանե Զաքարյանի, այսինքն՝ 1212 թ. հետո, երբ Զաքարե Զաքարյանն արդեն կենդանի չէր, այլ համաձայն Ստեփաննոս Օրբելյանի՝ Ագարակի ձոր գյուղի հետ կապված ավելի արժանահավատ նախորդ վկայության՝ ոչ ուշ, քան 1211 թ.: Առավել ևս, որ նախքան Ատրպատական ու Խորասան արշավելը Զաքարյանները, ըստ նույն հեղինակի մի այլ հաղորդման, 1211 թ. ձեռնամուխ էին եղել Սյունիքի մյուս գավառների ազատագրմանը: Դա հնարավոր էր միայն Վայոց ձորը Ելտկուզյաններից մաքրելուց հետո, որը կատարվեց Վասակ Խաղբակյանի կողմից[78]:

Զաքարյանների ազատամարտերին անդրադառնալիս Ստեփաննոս Օրբելյանը շեշտում է, որ նրանք «առին ի 660 (1211 - Ա. Շ.) զՍիւնիս, զՈրոտն, զԲորոտն, զԲղեն, զԲարկուշատ»[79] բերդերը: Մի այլ առիթով նկատելով, որ Լիպարիտ Օրբելյանը «եղեւ առաջնորդ առման Սիւնեաց և այլ բերդերոյն»[80]: Հենվելով միայն այս պատմիչի վկայության վրա՝ Գ. Հովսեփյանը կարծել է, թե Սյունիքը 1211 թ. ազատագրվել էր[81]: Դրան նպաստել է և այն, որ մեծանուն գիտնականը, իր կոթողային աշխատության հավելվածում ճիշտ թվագրելով Արատեսի վանքում Վասակ Խաղբակյանի թողած 1220 թվակիր վիմագիրը, որտեղ նա հայտնում է «ի Գառնոյ մինչ ի Բարգուշատ»[82] կողմնակալ լինելու մասին, բուն աշխատության մեջ այն երկիցս անհասկանալիորեն թվագրել է 1214-ով[83]՝ անելով նաև դրանից բխող դիտարկումներ: Ելնելով Սյունիքը 1211 թ. ազատագրվելու՝ Ագարակի ձոր գյուղն այդ թվականին Զաքարե Զաքարյանի կողմից Նորավանքին վերադարձնելու մասին Ստեփաննոս Օրբելյանի վերը բերված վկայություններից՝ Արատեսի արձանագրության թվականը 6 տարով առաջ բերելուց, ինչպես նաև Վասակ Խաղ-բակյանի իշխանության հիմքերը 1201-1203 թթ. դրվելուց նա եզրահանգել է, որ «Օրբէլեանց եւ Խաղբակեանց կողմնակալութիւնները նշանակուել են միասին, Գեորգի Լաշայի եւ Իւանէ աթաբէկի կողմից, ասել է 1203-1210 թթ. Մէջ»[84]: Դրա համար հիմք է ծառայեցվել նաև Ստեփաննոս Օրբելյանի անթվական

---

[77] Նույն տեղում, էջ 350:

[78] **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ.,էջ 299, Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 123:

[79] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 392:

[80] Նույն տեղում, 397:

[81] **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ., էջ 18:

[82] Նույն տեղում, էջ 229: Հմմտ. Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 123: Արձանագրության թվականի ընթերցման ճշտությունը տեղում ստուգել ենք:

[83] **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ., էջ 18, 35:

[84] Նույն տեղում, էջ 18:

վկայությունը՝ Գեորգի Լաշայի ու Իվանե Զաքարյանի կողմից Լիպարիտ Օրբելյանին՝ Սյունիքում, իսկ Վասակ Խաղբակյանին Վայոց ձորում կողմնակալ նշանակելու մասին[85]: Քանի որ Սյունյաց պատմիչը Թամար թագուհու և Զաքարե Զաքարյանի անունները չի հիշատակում, Գ. Հովսեփյանն այդ իրադարձությունը 1212 թ.՝ վերջինիս մահվանից հետո, կատարված լինելը մերժելու նպատակով վկայակոչում է մորը՝ Թամարին, Գեորգի Լաշայի գահակցությունը և այն, որ իբրև իր գերիշխանությանը ենթակա գավառներ՝ Սյունիքում, Վայոց ձորում ու Բջնիում տեր ու տնօրեն էր ոչ թե Զաքարեն, այլ նրա եղբայր Իվանեն[86]: Վաստակաշատ գիտնականի փաստարկների քննության չդիմանալը երևում է թեկուզ նրան քաջածանոթ[87] Ագարակի ձոր գյուղի պատկանելության հետ կապված՝ վերը երկիցս հիշատակված պատմությունից: Եթե 1211 թ. Զաքարե Զաքարյանը և ոչ թե նրա եղբայր Իվանեն էր Լիպարիտ Օրբելյանի «բազում թախանձանօք» Վայոց ձորում լուծում անգամ նման մանր հարցը, ապա համապետական նշանակության այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին էր Օրբելյանների ու Պռոշյանների կողմնակալությունների ստեղծումն առանց նրա՝ իբրև վրացական թագավորության երկրորդ դեմքի, երբեք չէր լուծվի: Մասնավորապես, Վասակ Խաղբակյանը մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրներում առաջին անգամ իբրև կողմնակալ հիշատակվում է Զաքարե Զաքարյանի մահվանից տարիներ անց՝ 1216 թ.[88]:

Սյունիքի ազատագրումը 1211 թ. ոչ թե ավարտված, այլ շարունակված լինելու մասին տողերիս հեղինակի պնդման հիմքում ընկած են Վարդան վարդապետի, ցավոք, Գ. Հովսեփյանի անտեսած հաղորդումները և Ստեփաննոս Օրբելյանի տեղեկությունների հետ դրանց համադրումը: Անդրադառնալով Զաքարյանների նվաճումներին՝ Վարդան վարդապետը Կարսի առումից հետո նշում է Փառիսոսում գտնված Գետաբակ ու Չարեք բերդերի գրավումը[89], իսկ մի այլ առիթով 1214 թ. վախճանված Հաթերքի իշխան Վախթանգի տիրույթներն Իվանե Զաքարյանին հանձնվելը փաստելուց հետո նկատում է. «Եւ մեծն Իւանէ… առնու զՉարեքն և զամենայն շրջակայս նորա. և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդվոյ Զաքարիայ (Բլուզ Զաքարեի - Ա. Շ.) առնուն զՇամքոր. և ի վեցհարիւր վաթսուն և ութ (1219 - Ա. Շ.) թուին առնու զՈրոտն և զմերձակայ դղեակսն»[90]: Չարեքը 1214 թ. հետո՝ 1216 թ., գրավելը հաստատում է Ստեփաննոս Օրբելյանը՝ հավելելով համաժամանակ ևս երկու բերդերի առումը[91]: Հետևաբար, քանի որ Որոտնն ու շրջակա բերդերը նվաճվել են Չարեքից ու Շամքորից հետո, Վարդան վարդապետի առաջարկած 1219 թվականը հավաստի է, առավել ևս, որ նա հենց նույն տարով՝ «ի սոյն թուականի» է ճիշտ թվագրում Լևոն II-ի (1187-1219)

---

[85] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 397:
[86] **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ., էջ 18:
[87] Նույն տեղում:
[88] **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 352:
[89] **Վարդան վարդապետ,** էջ 138:
[90] Նույն տեղում, էջ 140-141:
[91] **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 352, 353:

մահը[92]: Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչը ևս, անդրադառնալով այս անցքերին, անթվական հաղորդում է. «Թագավորը (Գեորգի Լաշան- Ա. Շ.) գրավեց Որոտնը և բոլոր բերդերն ու շրջակայքը մինչև Նախճավան ու Գանձակի դռները, գրավեց Շամքորը»[93]: Այսպիսով, Սյունիքի ազատագրումը 1211 թ. ոչ թե ավարտվել, այլ շարունակվել է:

Սյունիքի ազատագրման ընթացքի մասին Ստեփաննոս Օրբելյանի հաղորդման մեջ նվաճված բերդերի թվարկման հաջորդականությունից հետևում է, որ նախ գրավվել է Սյունի բերդը: Այդպես էլ պետք է լիներ, քանզի Վայոց ձորից Զաքարյանները նախ պետք է մտնեին դրան հարևան Ծղուկք գավառ, որտեղ այժմյան Սիսիան քաղաքի տեղում գտնվում էր Սյունի բերդը:

Չարեքի ու դրա շրջակայքի, այդ թվում՝ Գետաբակ բերդի գրավումից հետո Զաքարյաններն իրենց գլխավոր ուշադրությունը դարձրին Շամքորի ազատագրման վրա: Այդ քաղաքն ընկած էր Ատրպատականը Հյուսիսային Հայաստանի ու Վրաստանի հետ կապող ամենակարճ ուղու՝ Պարտավ-Գանձակ-Հունարակերտ-Տփխիս ճանապարհի վրա և ռազմավարական ու առևտրա-տընտեսական մեծ նշանակություն ուներ: Շամքորը Զաքարյանների ազատա-մարտերի դեռ առաջին փուլում «ի նեղ էարկ» Բլուզ Զաքարեն[94]: Հոր գործը, ինչպես ասվեց, Իվանե Զաքարյանի օգնությամբ հաջողությամբ ավարտեց որդին՝ Վահրամ Գագեցին[95]: Անկասկած, Շամքորի ազատագրմանն անմիջապես նախորդել է այդ քաղաքից արևմուտք ընկած Սագամ բերդի առումը: Շամքորը Չարեքից հետո և Որոտնից առաջ ազատագրվելը ենթադրում է 1216-1219 թթ. միջակայքը: Բարեբախտաբար, ան-Նասիվու արժանահավատ վկայությունները թույլ են տալիս դա կոնկրետացնել 1216/1217-ով: Բանն այն է, որ Ելտկուզյան վերջին աթաբեկ Մուզաֆար ադ-Դին Ուզբեկը (1210-1225)՝ Աբու-Բաքրի եղբայրը, 1217 թ. հարկադրված ընդունեց խորեզմշահ Ալա ադ-Դին Մուհամմադի (1200-1220) գերիշ-խանությունը՝ դառնալով նրա հարկատուն: Խորամանկ Ուզբեկը խորեզմշահին հայտնում է, որ վրացական թագավորությունը, օգտվելով իր թուլությունից, գրավել է աթաբեկության ծայրամասերը, ուստի ի վիճակի չէ վճարել սահմանված հարկը[96]:

Մինչդեռ Ուզբեկն իր հերթին էր առաջին իսկ հնարավորության դեպքում ոտնձգություններ կատարում վրացական թագավորության կազմի մեջ գտնվող հայկական տարածքների նկատմամբ: Այսպես, դրանից քիչ առաջ՝ հիջրի 611 թ. (13.V.1214-1.V.1215), նա ասպատակել էր Ներքին Խաչենը և այն ավերելով՝ վերադարձել հարուստ ռազմավարով ու գերիներով[97]: XIII դ. սկզբի պարսկալեզու Անանուն հեղինակն այս արշավանքի պատճառ է համարում այն, որ տեղի հայերը

---

[92] **Վարդան վարդապետ,** էջ 141:

[93] Քարթլիս ցխովրեբա, հ. I, էջ 370 (վրացերեն):

[94] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 163:

[95] **Վարդան վարդապետ,** էջ 140, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 163:

[96] **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насиви,** *Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, с. 61.*

[97] *Ученые записки Института востоковедения, т. IX, с. 204-205.*

«աբխազների (վրացիների - Ա. Շ.) խռովություններ են կազմակերպում»[98] Ելտկուզյանների դեմ: Թերևս նաև այդ արշավանքն ու վրաց արքունիքին հարկատվությունից Ուզբեկի հրաժարվելն էին Գեորգի Լաշային ու Իվանե աթաբեկին դրդել վերսկսելու հարձակումները Ելտկուզյանների տիրույթների վրա և, մասնավորապես, ձեռնարկել Գանձակի գրավումը[99]: Չնայած Գանձակի նվաճման այս փորձը ևս անհաջող անցավ, սակայն Ուզբեկը պարտավորվեց վերսկսել հարկի վճարումը[100]: Այժմ արդեն դառնալով խորեզմշահի ենթական՝ նա ձգտում էր առավելագույնս օգտվել իր կարգավիճակից, ինչպես կարելի է մակաբերել ան-Նասիվու խոսքերից[101]:

Ալա ադ-Դին Մուհամմադն Ուզբեկին ոչ միայն ազատում է հարկից, այլև դեսպան է ուղարկում վրաց արքունիք և հայտնելով, որ Ելտկուզյան աթաբեկությունը դարձել է իր սեփական (խաս) տիրույթներից մեկը, վրացական կողմին զգուշացնում է նրա դեմ ոտնձգություններից: Ավելին, նա ցանկանում էր 50 հազարանոց ընտիր հեծյալ զորք ուղարկել վրացական թագավորության դեմ՝ այն նվաճելու նպատակով: Սակայն դեպի Բաղդադ արշավանքին խորեզմշահի նախապատրաստվելու պատճառով դա չիրագործվեց, քանի որ նա շտապ պարսկական Իրաքից հետ դարձավ[102]: Այլապես, նկատում է ան-Նասիվին, «Ուզբեկին կհաջողվեր վրացիներից ստանալ այն, ինչ ուզում էր»[103]: Այդուհանդերձ, վրաց արքունիքը, լրջորեն անհանգստանալով, խորեզմշահի դեսպանի ուղեկցությամբ, ան-Նասիվի խոսքերով ասած, զարմանահրաշ նվերներով պատվիրակ է ուղարկում նրա մոտ: Հատկանշական է, որ վրաց արքունիքի պատվիրակն անգամ տեսնելով, որ Ալա ադ-Դին Մուհամմադը վրացական թագավորություն ներխուժելու փոխարեն հետ է գնում, շարունակում է ճանապարհը և խորեզմշահին հասնում միայն նրա Ջեյհուն (Ամուդարյա) գետն անցնելուց հետո[104]: Ուրեմն, նա խնդիր ուներ խորեզմշահին հավաստիացնել Ելտկուզյան աթաբեկության նկատմամբ վրացական թագավորության լոյալությունը և կանխել հետագա բարդությունները:

Հենց դրանով է բացատրվում ինչպես Շամքորի գրավումից հետո «Գանձակի դռները» հասած և եռակողմ աքցանի մեջ առնված այդ քաղաքը հայ-վրացական զորքերի կողմից այդպես էլ չգրավվելը, այնպես էլ Սյունիքի ազատագրման մարտերի ժամանակավոր՝ երկամյա դադարը: Այն վերսկսվեց միայն 1219 թ., երբ մոնղոլական ահագնացող վտանգն Ալա ադ-Դին Մուհամմադի ուշադրությունը

---

[98] Նույն տեղում, էջ 204:

[99] Վրաց ժամանակագրություն (1207-1218), էջ 45-46: Պ. Մուրադյանն իրավացի է, գտնելով, որ սա տեղի է ունեցել 1219 թ. առաջ (նույն տեղում, էջ 194, ծան. 5):

[100] Նույն տեղում, էջ 48:

[101] **ан-Насиви**, *с. 61.*

[102] Նույն տեղում:

[103] Նույն տեղում:

[104] Նույն տեղում: Ազ Զահաբիի վկայությամբ խորեզմշահը մտադիր էր վրացական թագավորությունը գրավելուց հետո շարժվել դեպի Ասորիք ու Փոքր Ասիա, ինչը հարուցել էր տեղի իշխողների տագնապը (**Буниятов З. М.,** *Государство Хорезмшахов – Ануштигенидов. 1037-1231, М., 1986, с. 82, с. 205, прим. 107):*

դեպի արևելք էր շեղել: Հենց այդ թվականին գրավվեցին նույն Ծղուկք գավառում գտնվող Որոտն, ապա դրա մերձակայքում ընկած Բորոտն բերդերը: Այնուհետև գրավվեց Որոտն ու Բարգուշատ բերդերի արանքում գտնվող Բղեն բերդը: Վերջինիս նվաճմանը հետևեց Մյուս Բաղք գավառի պաշտպանական համակարգի կարևոր օղակ Բարգուշատի առումը, ինչի ստույգ թվականը հայտնի չէ: Արատեսում Վասակ Խաղբակյանի թողած վերոհիշյալ արձանագրությունից միայն հայտնի է, որ այն 1220 թ. արդեն Զաքարյանների ձեռքում էր: Բարգուշատ բերդի գրավմամբ նրանք լիովին իրենց հսկողության տակ առան նույնանուն գետի աջ ափով ձգվող և մինչև Արաքս տանող ճանապարհը: Դա Սյունիքի մնացած գավառներն ազատագրելու ամուր հենակետ ստեղծեց: Այս բերդերն իրենց շրջակայքով Իվանե Զաքարյանը հանձնեց Լիպարիտ Օրբելյանին՝ իբրև «առաջ-նորդ առման Սիւնեաց և այլ բերդերոյն»[105]: Սկզբնաղբյուրներում հանվանե փաստված է նաև Սյունիքի կարևոր ամրություններից մեկի՝ Բաղաբերդի ազա-տագրումը: Մխիթար Այրիվանեցին Զաքարյանների նվաճումների ծայրակետերը թվարկելիս գրել է. «Զաքարէ և Իւանէ առին կարգաւ զաշխարհս տաճկաց ի Կայենո մինչ ի Բաղաբերդ՝ ի Սամշոյլտէ մինչ ի Վաղարշակերտ[106]»: Ժամանակագիրն այս իրադարձությունները թվագրել է 1191-1200-ով, ինչը չի համապա-տասխանում իրականությանը: Բնականաբար, Զաքարյանները գրավել էին ոչ միայն Բաղաբեր-դը, այլև Զորք գավառը, որի կենտրոնն էր այդ նշանավոր ամրությունը, բայց թե երբ է դա կատարվել, դժվար է ասել: Վարդան վարդապետի դիտարկմամբ Իվանե Զաքարյանի ղեկավարությամբ ընթացած Սյունիքի ազատագրումը լիակատար չէր, պատմիչի խոսքերով ասած՝ «ոչ բովանդակ»[107]:

Արցախում Զաքարյաններին հաջողվեց գրավել նաև Ականա, Չարաբերդ և Կարկառ բերդերը: Այդ են վկայում Գեղարդում 1219 թ. հետո Իվանե Զաքարյանի թողած արձանագրությունը և Կիրակոս Գանձակեցու մի հաղորդումը: Իվանեն հայտնում է, որ գրավել է Կայանից ու Կայծոնից մինչև Բարգուշատ և Ականայից մինչև Նախճավան, իսկ այնտեղից մինչև Կարս ընկած տարածքը, իսկ Ստեփան-նոս Օրբելյանը փաստում է Զաքարյանների կողմից Չարաբերդի գրավումը[108]: Իսկ Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ Ներքին Խաչենի իշխան Հասան-Զալալի խնդրանքով Բաթու խանը «ետ ի նա զհայրենիս իւր զՉարաբերդ և զԱկանայ և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»[109]: Հաս-կանալի է, որ պատմիչը, «ազգն վրաց» ասելով, նկատի ունի վրացական թագա-վորությունը ներկայացնող Իվանե Զաքարյանին: Չնայած այս երեք բերդերի գրավ-

---

[105] **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 397:

[106] **Մխիթար Այրիվանեցի,** էջ 64-65:

[107] **Վարդան վարդապետ,** էջ 141:

[108] **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 392, **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ., էջ 299:

[109] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 359: Զաքարյանների ուշադրությունն այս տարածաշրջանը վաղուց էր գրավել: Այդ է վկայում 1190-ական թթ. առաջին կեսին դեպի այդտեղ նրանց կատարած հաջող հետախուզական արշավանքը (**Кекелидзе К. С.,** ***Этю****ды по истории древнегрузинской литературы, т. XII, с. 205-206).*

ման ստույգ ժամանակը հայտնի չէ, Իվանե Զաքարյանի արձանագրության մեջ Բարգուշատի հիշատակությունը և այդ բերդերը նույն տարածաշրջանում գտնվելը թույլ են տալիս պնդելու, որ դրանք բոլորն էլ գրավվել են համաժամանակ՝ նախքան 1220 թ.: Ավելի ստույգ, դրանք գրավվել են 1216 թ. Չարեքի կամ էլ 1219 թ. Որոտնի գրավումից անմիջապես հետո: Զաքարյանների ազատամարտերի երկրորդ փուլը մոնղոլական հետախուզական արշավանքի պատճառով 1220 թ. ընդհատվեց:

Այսպիսով, իրենց ազատամարտերի 1204-1220 թթ. ժամանակահատվածն ընդգրկող երկրորդ փուլում, չնայած զգալի անհաջողություններին, Զաքարյաններին հաջողվեց ազատագրել սելջուկյան լծի տակ գտնվող զգալի տարածքներ: Նրանք վրաց Բագրատունիների օգնությամբ ազատագրեցին Կարս-Վանանդը, որը, սակայն, ոչ թե տրվեց նրանց, այլ մտցվեց արքունապատկան տիրույթների մեջ և Զաքարյան Հայաստանի մաս չկազմեց: Շարունակելով Սյունիքի ազատագրումը՝ Զաքարյանները գրավեցին Վայոց ձոր, Ծղուկք, Մյուս Բաղք և Զորք գավառները: Սակայն Սյունիքն ամբողջությամբ չհաջողվեց ազատագրել: Նրանք նաև ավարտեցին Փառիսոսի ազատագրումը՝ գրավելով Չարեք ու Գետաբակ բերդերն իրենց շրջակայքով: Ազատագրվեց նաև Շամքոր քաղաքը: Արցախում ազատագրվեցին Չարաբերդ, Ականա և Կարկառ բերդերն իրենց շրջակայքով: Չնայած դեպի հարավ Զաքարյանների առաջխաղացումը Այուբյանների կողմից կասեցվեց, նախքան Շահ-Արմենների պետությունն Այուբյաններին անցնելը նրանց հաջողվեց ազատագրել Արաքսի ձախափնյակում ընկած որոշ շրջաններ:

## ВТОРОЙ ЭТАП ОСВОБОДИТЕЛЬНЫХ ВОЙН ЗАКАРЯНОВ

ШАХНАЗАРЯН А. И.

### Резюме

Второй этап освободительных войн Закарянов охватывает период с 1204 по 1220 годы, который имел целью освобождение остальных северо-восточных областей, а также южных провинций Армении. Борьба велась против атабекства Ильдегизидов, эмирства Шах-Арменов, а затем Аюбидов, а также против подвластных им мелких политических образований. На юге Закарянам удалось освободить лишь Карс-Ананд и некоторые левобережные районы Аракса. На северо-востоке Закаряны освободили сюникские области Вайоц Дзор, Цгук, Мюс Бахк и Дзорк, а также завершили освобождение провинции Парисос. Были освобождены город Шамкор и арцахские крепости Чараберд, Акана, Каркар с их окрестностями.